«ՀԱՅՈՑ ԵԿԵՂԵՑՈՒ ՊԱՏՄՈՒԹՅԱՆ» ԴԱՍԱԳՐՔԵՐԻ ՇՆՈՐՀԱՆԴԵՍ ՄԱՅՐ ԱԹՈՌ Ս. ԷՋՄԻԱԾՆՈՒՄ

Նոյեմբերի 3-ին Մայր Աթոռ Ս. Էջմիածնում Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Ամենայն Հայոց Կաթողիկոսի մասնակցությամբ տեղի ունեցավ «Հայոց Եկեղեցու պատմություն» առարկայի 4-7-րդ դասարանների դասագրքերի շնորհանդեսը: Շնորհանդեսին ներկա էին ՀՀ և ԼՂՀ իշխանությունների ներկայացուցիչներ, Մայր Աթոռ Ս. Էջմիածնի միաբան հայրեր, մտավորականներ, ՀՀ-ում հավատարմագրված օտարերկրյա դիվանագետներ, հյուրեր:

Մայր Աթոռ Ս. Էջմիածնի և ՀՀ կառավարության միջև մեկ տարի առաջ ստորագրված համաձայնագրով, այս տարվա սեպտեմբերից «Հայոց Եկեղեցու պատմություն» առարկան դասավանդվում է ՀՀ և ԼՂՀ հանրակրթական դպրոցների 4-5-րդ դասարաններում: 6-7-րդ դասարանների դասագրքերը դեռևս փորձնական են:

Դասագրքերը կազմվել են ՀՀ կրթության և գիտության նախարարության Կրթական ծրագրերի բարեփոխումների կենտրոնի մասնագետների ու Հայ Եկեղեցու մի խումբ հոգևորականների ջանքերով: Դասագրքերը հրատարակվել են ազգային բարերար տիկ. Լուիզ Մանուկյան Սիմոնի հովանավորությամբ՝ ի հիշատակ իր ծնողների՝ երախտաշատ բարերարներ տեր և տիկ. Ալեք և Մարի Մանուկյանների: Դասագրքերի պատրաստման աշխատանքներին իրենց նպաստն են բերել նաև Իրմա և Սիլվա Տեր-Ստեփանյան քույրերը և Հարություն Աղա-Սարգսյանը:

Բացելով հանդիսությունը՝ Սյունյաց թեմի առաջնորդ Տ. Աբրահամ եպս. Մկրտչյանն անդրադարձավ դասագրքերի ստեղծման աշխատանքներին ու դրանց կարևորությանը: «Հայ Եկեղեցին ազգային Եկեղեցի է, և Հայ Եկեղեցու պատմությունը մեր ազգի պատմության անբաժանելի մասն է: Այս Եկեղեցին ստեղծել է ժողովուրդը, և այս Եկեղեցին ժողովրդի մի մասնիկն է: Քրիստոնեությունը մեզ չի պարտադրվել և այսօր էլ չի պարտադրվում, սակայն հայ քրիստոնյան հայի ազգային նկարագրի ամենաբնորոշ դրսևորումն է»,- նշեց Սրբազան Հայրը:

Հանդիսության ընթացքում բոլոր ելույթ ունեցողներն ընդգծեցին նոր առարկայի կարևորությունը՝ որպես նոր սերնդի ազգային-հոգևոր դաստիարակության հիմք:

«Այո՛, սա միայն Հայոց Եկեղեցու պատմության դասագիրք չէ, սա նաև մեր իշխանությունների, Ամենայն Հայոց Կաթողիկոսի, Մայր Աթոռ Ս. Էջմիածնի վերաբերմունքն է իսկապես մի կարևոր գործի, որ կոչվում է հայեցի դաստիարակություն: Հայեցի դաստիարակությունը մեզանից ոչ ոք չի պատկերացնում առանց այն դաստիարակության, որը մեզ պետք է տա և տալիս է 1700-ամյա ակունքներ ունեցող Հայ Առաքելական Եկեղեցին»,- նշեց ՀՀ Կրթության և գիտության նախարար Սերգո Երիցյանը:

«Մենք այս գրքերը պատրաստել ենք ոչ միայն հայ դպրոցի, այլև՝ հայ ընտանիքի համար: ...Սա կարտի կանչ է դեպի մեր արմատները, սա նաև փորձ է հայ մարդու հոգեբանության մեջ եղած ճեղքերը լցնելու, սա փորձ է մեր քրիստոնեական նկարագրին ավելի

մոտ բերելու, սա փորձ է մարդու մեջ սերն ավելի խորացնելու»,- նշեց Կրթական բարեփոխումների կենտրոնի տնօրեն Վիկտոր Մարտիրոսյանը:

Ելույթ ունեցան նաև ԼՂՀ կրթության նախարարի տեղակալ Սլավիկ Ասրյանը և բանաստեղծ Ռազմիկ Դավոյանը:

Վերջում ամենքին իր Հայրապետական գնահատանքի խոսքն ուղղեց Ամենայն Հայոց Հայրապետը:

«Այս գրքերը լոկ կրոնական մի կառույցի պատմություն չէ, որ ներկայացնում են: Այս գրքերը ներկայացնում են պատմությունը մեր ազգի, մեր մշակույթի, մեր ավանդույթների, մեր սովորույթների, մեր լինելության, մեր գոյության, մեր ինքնության... Ես հույս ունեմ, որ հայ մանուկը պիտի սիրի այս դասագիրքը, պիտի սիրի ու պիտի կրթվի այս դասագրքով՝ որպես ազնիվ քաղաքացի մեր հայրենիքի, որպես արժանավոր զավակ իր ազգի»,- նշեց Նորին Սրբությունը:

4-րդ դասարանի ձեռնարկներն աշակերտներին ծանոթացնում են Հին և Նոր Կտակարաններին: 5-րդ դասարանի դասագրքերում ներկայացված են քրիստոնեական Եկեղեցիները, հարանվանությունները, ուղղություններն ու խորհուրդները, ազգային-եկեղեցական տոները: 6-8-րդ դասարաններում աշակերտները ծանոթանալու են Հայ Եկեղեցու պատմությանը՝ առաքելական շրջանից մինչև մեր օրերը: Մինչև 2005 թ. «Հայոց Եկեղեցու պատմություն» կդասավանդվի նաև 8-10-րդ դասարաններում: Այս դասարաններում կուսուցանվի քրիստոնեական բարոյագիտություն:

ՄԱՅՐ ԱԹՈՌ Ս. ԷՋՄԻԱԾՆԻ
ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳ